ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «ՀԵՆԳԵՐ» ծրագրի հերթական հանդիպմանը

Հարգելի գործընկերներ, հյուրեր

Ողջունում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Տեմպուսի «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների զբաղվածունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց» ծրագրի հերթական հանդիպմանը:

Ինչպես հայտնի է, «ՀԵՆԳԵՐ» ծրագրի գերնպատակն է բարձրացնել կրթության որակը, ուժեղացնել ուսումնական գործընթացի և աշխատաշուկայի կապը, ուսանողների և շրջանավարտների ծառայողունակությունը: Ընդհանուր առմամբ, ծրագիրը նպաստում է նոր կրթական քաղաքականության՝ ուսանողակենտրոն մոդելի իրականացմանը:

Այս ծրագիրը խիստ համահունչ է աշխարհում և Հայաստանում ընթացող կրթական բարեփոխումներին և զարգացումներին: Ներկա զարգացումները

պայմանավորված են կրթության քաղաքականությունից դեպի դրանց իրագործմանն անցումով, և այս պատասխանատվությունը կրում են համալսարանները: Համալսարանների գործունեությունից է կախված կրթական բարեփոխումների իրականացումը և ընդհանուր առմամբ հասարակական զարգացումը:
Համալսարանները վերակառուցվում են նոր մարտահրավերներին համապատասխան՝ դառնալով ազատ ու ստեղծագործ մտքի բաց հարթակներ, հասարակությանը մատուցելով կրթական, գիտական և այլ ծառայություններ:

Համալսարանները աստիճանաբար պետք է հաղթահարեն հարաբերական մեկուսացումը և դառնան ոչ միայն բաց համակարգեր, այլ նաև կամրջեն կրթությունը և աշխատաշուկան: Այս գործընթացներում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ ուսանողները, գործատուները, շրջանավարտները, ծնողները, պետական և հասարակական կազմակերպությունները, այլ խոսքով՝ ամբողջ հասարակությունը:

Ժամանակակից աշխարհում համալսարանների առաքելությունը ոչ միայն կրթություն տրամադրելն է, այլ հասարակական ակտիվ քաղաքացու, ազատ, ստեղծագործ

մարդուն անհրաժեշտ գիտելիք, հմտություններ և պատասխանատվություն փոխանցելն ու զարգացնելն է:
Ահա այս մարտահրավերներին է ուղղված «ՀԵՆԳԵՐ» ծրագիրը, որը մեր կոնսորցիումը հաջողությամբ իրականացնում է շուրջ երկու տարի:

Հարգելի գործընկերներ

Ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ հաջողություն մաղթել բոլորիս ինչպես կրթական բարեփոխումների, այնպես էլ ծրագրի արդյունավետ իրականացման գործում:

Շնորհակալություն ուշադրության համար:
Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ